ԿԱՐԾԻՔ

Գոռ Վահանի Մելիքսեթյանի «ԴԻԶԱՅՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԲՈՒՀ-ում» խորագրով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան հայցելու ԺԳ.00.02 մասնագիտությամբ:

Դպրոցական կրթության գեղարվեստական միտվածության ու հասարակայնացման պայմաններում առանձնահատուկ արդիականություն է ստանում նաև գեղարվեստական կրթության խնդիրը, որում իր առանձնահատուկ տեղն ունի նկարիչ-մանկավարժի մասնագիտական կարողությունների գնահատումը:

Այս տեսանկյունից Գոռ Մելիքսեթյանի ատենախոսությունը արդիական, խորհիմն հետազոտություն է, որում մենագրորեն լուծում է տրվում գեղարվեստական կրթության ֆակուլտետի ապագա կերպարվեստի ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության խնդրին «դիզայն» առարկայի դասավանդման միջոցով: Գրախոսվող սույն ատենախոսությունը գրված է տրամաբանորեն նախամտածված ծրագրի համապատասխան և ներառում է ժամանակահունչ գիտական հիմնահարցի ուսումնասիրություն և մշակում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից /որոնք ընդգծում են 7 ենթագլուխներ/, ամփոփումից, մատենագիտական ցանկից և հավելվածից:

Ատենախոսը հստակ որոշարկում է հիմնախնդիրը, գիտական ենթադրությունը, առաջադրած խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը: Հանգամանորեն մշակված է տեսաբանական և փորձարարական հետազոտության մեթոդիկան՝ նրա կիրառած համակարգը թույլ է տալիս խորությամբ և հանգամանալիորեն լուծել առաջադրված բոլոր խնդիրները:

Հետազոտության մեթոդական համակարգը ներառում է.

- Դիզայնի, գեղագիտության, հոգեբանության, մանկավարժության, արվեստի իմացության, մեթոդների առնչությամբ գրականության ուսումնասիրություն և տեսաբանական վերլուծություն՝ հետազոտության գիտական-տեսաբանական հիմքերի մշակման համար:

- Ուսուցիչների ավանդական և ընթացիկ մանկավարժական փորձի ուսումնասիրում, վերլուծություն և ընդհանուր եզրակացություն:
- Կերպարվեստի ուսուցիչների հաշվառում՝ մանկավարժական դիզայնի դասավանդման գործընթացի պարզաբանման նպատակով: Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների հաշվառում՝ դիզայն առարկայի նկատմամբ հետաքրքրությունների ու պահանջմունքների ուսումնասիրման նպատակով:
- Բուհական ուսումնական գործընթացի նպատակաուղղված տնական դիտարկումներ, ներառյալ տեսագործնական պարապմունքները:
- Ուսումնասիրություններ ուսանողների գեղարվեստական նախագծումների հանդեպ գեղագիտական դատողությունների, ստեղծագործական երևակայության հիմքով:
- Ախտորոշիչ-վերլուծական, ուսուցողական, հաստատող փորձարարություններ:
- Կերպարվեստ բաժնի 2-3-րդ կուրսերի ուսանողների դիզայներական գործունեության արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն՝ նրանց ստեղծագործական կենսունակությունը որոշարկելու նպատակով:

Ատենախոսության մեջ դրական միտում է այն, որ նրանում լայնորեն ներկայացվցած են պահանջվածփորձարարության արդյունքները՝ տեսականից բացի նաև իրազեկական նյութեր՝ աղյուսակներ, պատկերազարդումներ: Դրանց համալիրը համոզիչ կերպով ցուցում է առաջադրված գիտական դրույթների իրավաչափությունը, հաստատում գիտական ենթադրության հիմնական ուղղվածությունը, ակնառու կերպով լուսաբանում փորձարարության ընթացքը և նրա հիմնական արդյունքները:

Ատենախոսական հետազոտության արդյունքում լուծվում են առաջադրված բոլոր խնդիրները, հաստատված է գիտական ենթադրությունը: Այսպիսով, նա կատարել է մի հետազոտություն, որով իրականացնում է կրթամշակութային կարևոր նշանակություն ունեցող գիտական խոշոր խնդրի լուծում:

Ատենախոսության գիտական նորույթն ու տեսաբանական արժեքն ամփոփվում են դիզայն առարկայի գեղարվեստակրթական առանձնահատկությունների դրսևորմամբ՝ որպես իրականության գեղարվեստական արտացոլման ձև, որպես մանկավարժ-նկարչի մասնագիտական որակի միջոց:

- Դիզայն առարկայի դասավանդման ուսումնասիրությունը, որպես միջանձնային հաղորդակցման միջոց,

- Դիզայն առարկայի գիտատեսաբանական հիմքերի հետազոտումը, որպես ուսումնական առարկա,
- Դիզայն առարկայի նկատմամբ ուսանողների մասնագիտական վերաբերմունքի ձևավորում և դրան նպատակաուղղված մեթոդների և միջոցների հոգեբանամանկավարժական հիմքերի բացահայտումներ,
- Ապագա կերպարվեստի ուսուցիչների մոտ գեղագիտական ճաշակի, ունակությունների և գեղագիտական մշակույթի ձևավորման ուղիների որոշարկումը, որպես դիզայն առարկայի դասավանդմամբ ստեղծագործական գործունեության հենք:

Հատկապես հարկ է նշել, որ անցկացված հետազոտության և, ամենից առաջ, խորը տեսաբանական վերլուծության և հայեցակարգային ծրագրով փորձարարության հիմնախնդրի մշակման արդյունքում ատենախոսին հաջողվել է հաստատել գիտական մի շարք իրողություններ, դրույթներ, որոնք սկզբունքորեն փոխում են ԲՈՒՀ-ում դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկայի ռազմավարությունն ու վարքագիծը: Հետազոտության գործնական նշանակությունը որոշարկվում է նրանով, որ ատենախոսը մշակութային տեսանկյունից մատուցում է համապատասխան մեթոդական ցուցումներ, որը կարող է հանդիսանալ յուրաքանչյուր ուսուցչի օգնող ձեռնարկ իր մեթոդական բացահայտումներով, ինչպես նաև կարևոր տեղեկատվական նյութ հանդիսանալ այդ բնագավառի հետազոտողների և ուսանողների համար: Բացի այդ, Գոռ Մելիքսեթյանը մի շարք եզրահանգումներ է կատարել, որոնք առանձնահատուկ կարևոր նշանակություն ունեն զալիք սերնդի գեղարվեստական մտածողության խնդրի մեթոդական հետագա մշակման և նրանց գեղարվեստական կրթության կատարելագործման առումով: Մասնավորապես, այդ եզրակացությունները վերաբերվում են նրան, որ ատենախոսի փորձարարական հետազոտությունը հաստատում և համոզիչ կերպով ապացուցում է դիզայն առարկայի դասավանդման հնարավորությունները, ապագա նկարիչ-մանկավարժի գեղարվեստաստեղծագործական մտածողության զարգացմանը հաղորդակից հոգեբանական գործընթացների դրսևորումների բացահայտման հանգամանալիությունն ու խորքայնությունը որոշարկում է նաև ուսուցանելու ուսումնատեսական հնարքների, ուղիների, միջոցների և ձևատեսական հանձնարարությունների մշակման առանձնահատկությունները:

Դիզայն առարկայի ինտեգրված ուսուցման միջոցներով ուսանողների դիզայնե-րական մտածողության ձևավորման խնդրի բացահայտման ու լուծման համալիր մոտեցման դիրքերից էլ կատարված է ատենախոսական սույն հետազոտությունը:

Այսպիսով, ներկայացված ատենախոսությունը, շարադրված է գիտատեսական բարձր մակարդակով և կարևոր ներդրում է հանդիսանում գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների մասնագիտական կարողությունների տեսա-կան ու գործնական ընթացքի հետագա մշակման մեջ:

Այս ամենով հանդերձ, հարկ է նկատել գրախոսվող ատենախոսության առանձին բացթողումները.

1. Տեսողական ընկալման համար կարելի էր հարստացնել աղյուսակների և գծապատկերների ծավալը:

2. Հետազոտության մեջ ըստ արժանվույն արտացոլված չեն կրթության մասին նոր օրենքները՝ միջնակարգ կրթության տեսությունները:

3. Չեն հստակեցված մասնավոր մեթոդիկաները, դիտվում է որպես մանկավարժական դիզայնի բաղադրամաս:

Իսկ ընդհանուր առմամբ Գոռ Մելիքսեթյանի «Դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկան ԲՈՒՀ-ում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհման ԺԳ.00.02 դասավանդման և ուսուցման մեթոդիկա /կերպարվեստ/ մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

ՄԳԴ, պրոֆեսոր Ա. Կ. Եղիազարյան

08.05.2026

Հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

գիտական քարտուղար ՄԳԹ, դոցենտ Հ. Վ. Թադևոսյան

07.05.2026թ.